ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 76

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

Երևան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
Երևան քաղաքի Ներքին Չարբախ N 229 հասցեում գտնվող 0.2097 հա մակերեսով 01-011-0279-0008 կադաստրային ծածկագրով բուֆերային (ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝ գյուղատնտեսական նշանակության խաղողի հողեր)	Երևան քաղաքի Ներքին Չարբախ N 229 հասցեում գտնվող 0.2097 հա մակերեսով 01-011-0279-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Երևանի քաղաքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Երևան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ Երևան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող՝		
		Դ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «13» «փետրվարի» 2024 թ.